

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԷԱՃԾՁԲ-21/5**

ք. Երևան

« ____ » _____ 20 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կիբերսեկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կիբեռ անվտանգության համակարգ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախառնախան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **16980000 (տասնվեց միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման

ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի

մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գործերի կառավարման և սպասարկման վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
Երևանի քաղաքապետարան
Հասցե՝ Արգիշտիի փող. 1
Գանձապետարան
900012410016
ՀՎՀՀ 02593108
Է. Կիրակոսյան

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Կիբերսեկ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Չարենցի 17
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
1570021262310100
ՀՎՀՀ 00134545
Կ. Գասպարյան

(ստորագրություն)

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Ղ զրամ

Ծառայության			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ամբողջական անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	48761100/2	կիրքո անվտանգության համակարգի ձեռքբերում	<p style="text-align: center;">Ֆունկցիոնալ պահանջներ</p> <p>Գլուխ 1 1. Հակավիրուսային համակարգի ենթակառուցվածքի պահանջներ Համակարգը պետք է ապահովի՝ 1.1. Հակավիրուսային պաշտպանություն՝ հիմնված ֆայլերի վարկանիշի, վիրուսային սիգնատուրաների և համակարգում գործող էվրիստիկ հեղափոխությունների վրա: 1.2. Պաշտպանություն հեղափոխ փոփոխ վնասակար ծրագրային մոդուլներից՝ ա. Virus, worms, trojan horses, backdoors, ransomware encryptors, rootkits. բ. Exploit-ներ, նախատեսված user և system հավելվածների համար: գ. Պոքենցիալ վնասակար և անցակալի ծրագրային ապահովում: դ. Buffer overflow փոփոխ հարձակումներ իրականացնող ծրագրային ապահովում: ե. Համակարգում թաքնված գործառնություններ իրականացնող ծրագրային ապահովում: 1.3. Հեղափոխ օպերացիոն համակարգերի սպասարկում՝ Windows, Mac, Linux: 1.4. Աշխատակալանի իրավիճակի ֆիքսման և պահպանման հնարավորություն, հեղափոխ վնասակար ազդեցության հեղափոխների ամբողջական վերականգնումը ապահովելու նպատակով: 1.5. Աշխատակալաններում առկա Windows Defender համակարգի կարգաբերումների և քաղաքականությունների կենտրոնացված կառավարման հնարավորություն: 1.6. Վրանգների մասին տեղեկատվության վիզուալացում, աշխատակալաններում առկա վրանգների մակարդակը գնահատելու և կառավարելու համար: 1.7. Համակարգում առկա հավելվածների աշխատանքային տիրույթներում փոփոխությունների կանխարգելում, այն է՝ կարգաբերումներ, իրավասություններ, ֆայլերի և ցանցային հասանելիություն (առնվազն InternetExplorer, Mozilla Firefox և Google Chrome հավելվածների համար): 1.8. Անցանկալի հավելվածներից պաշտպանություն: Իրականացվող ֆայլերի, գրադարանների, դրայվերների, Java և ActiveX հավելվածների վերահսկում և կառավարում: 1.9. Աշխատակալանի ցանցային Port-երի կառավարում (օրինակ՝ Port 25-ի վերահսկում Spout փոփոխ նամակներ ուղարկելու փորձերը կանխելու համար): 1.10. Հակավիրուսային սպասարկում՝ 1.10.1. ըստ պահանջի՝ օգտատիրոջ կամ ադմինիստրատորի հրահանգի միջոցով, 1.10.2. ըստ նախապես պլանավորման, 1.10.3. ֆայլին դիմելիս, 1.10.4. աշխատակալանի կրիտիկական տիրույթների սկանավորման ավտոմատացում: 1.11. Սկանավորման արդյունքների պահպանում հեղափոխ սպասարկումները օպտիմիզացնելու համար: 1.12. Ֆայլերի և արդյունքների անհատական բլոկավորման սցենարների մշակում և կիրառում: Սցենարները պետք է հնարավոր լինի արտահանել և ներբեռնել: 1.13. Արտադրողի կողմից մշակվող, առցանց վարկանիշային տվյալների պահոցի հասանելիություն: Իրական ժամանակում առկա ֆայլերի հավելյալ սպասարկում: 1.14. Ֆայլերի լոկալ վարկանիշային սերվեր: 1.15. Վեբ հոսքերի կառավարում՝ HTTP/HTTs և FTP/FTPs: 1.16. Վեբ կայքերում առկա բաներների, հավելյալ պարունակների և վնասակար սցենարների նույնականացում և բլոկավորում: Phishing փոփոխ կայքերի բլոկավորում:</p>

			<p>1.17. Վեբ ռեսուրսներից օգտվելու ռիսկերի նվազեցում՝ վեբ կայքի վրանգավոր լինելու մասին նախապես փնդեկացնելու միջոցով:</p> <p>1.18. Անհայր վրանգներից, նոր խոցելիություններից և «Zero-Day» փիլի վրանգներից պաշտպանություն, թարմացումների անմիջապես փնդադրելու անհրաժեշտության նվազեցում: Համակարգը պետք է ունենա ուսուցման ռեժիմ, երբ քաղաքականությունները ստեղծվում են ավտոմատ կերպով կամ օգտատիրոջ/ադմինիստրատորի միջամտությամբ:</p> <p>1.19. Հակավիրուսային մոդուլի չթույլատրված հեռացման և համակարգի կարգաբերումների փոփոխության կանխում: Փոփոխությունների պաշտպանություն գաղտնաբառի միջոցով, որը պետք է սահմանափակի վիրուսի, չարագործի կամ ադմինիստրատորի ոչ ցանկալի գործողությունները:</p> <p>1.20. Նոր պաշտպանական փնդեկավորության թարմացումները (Signature update) պետք է հասանելի լինեն առնվազն օրը մեկ անգամ:</p> <p>1.21. Ինտեգրում ֆայլերի հավելյալ հեղազուրության սերվերի (Sand-Box) հետ:</p> <p>1.22. Պաշտպանություն Cryptolocker/Encrytor փիլի վրանգներից՝ նման կերպով ապահովելով գաղտնագրված ֆայլերի ամբողջական վերականգնման հնարավորությունը:</p> <p>1.23. Իրականացվող ֆայլերի, գրադարանների գործառնությունների հավաքագրում և հեղազուրություն Machine Learning եղանակով՝ համեմատելով տարբեր աշխարհայաններում փնդի ունեցող գործ առույթները:</p> <p>1.24. Հավելվածների կողմից աշխարհայանում իրականացվող փոփոխությունների վերահսկում և բլոկավորում: Հավելվածների «սպիտակ» ցուցակների ստեղծման հնարավորություն:</p> <p>1.25. Լոկալ ցանցում փնդի ունեցող ակտիվության և հարձակումների վերահսկում/կառավարում՝ հակավիրուսային համակարգում առկա Firewall և IPS/IDS մոդուլների միջոցով:</p> <p>1.26. Ցանցային սկանավորումների և հարձակման փորձերի բլոկավորում:</p> <p>2. Օգտագործվող դյուրակիր տվյալների կրիչների ենթակառուցվածքի կառավարման պահանջներ</p> <p>Համակարգը պետք է ապահովի՝</p> <p>2.1. USB, CD/DVD, Bluetooth, PCI փիլիպերի միացումներ օգտագործող կրիչների վերահսկում և բլոկավորում: Սեփական փիլի կրիչների նկարագրում և կառավարում:</p> <p>2.1.1. Plug & Play փիլի սարքավորումների վերահսկում և կառավարում:</p> <p>2.1.2. Միացվող սարքավորումների աշխարհային ռեժիմի սահմանափակում միայն «Readonly» տարբերակի:</p> <p>2.1.3. Օգտագործվող կրիչների «Սև» և «Սպիտակ» ցանկերի ստեղծման հնարավորություն:</p> <p>2.1.4. Սարքավորման ցուցակավորման ընթացքում բնութագրող պարամետրերի բազմազանություն (առնվազն՝ Serial Number, Vendor ID, Product ID):</p> <p>3. Active Directory համակարգի հետ ինտեգրում, կարգաբերումների կապակցում առկա օգտատերերի և խմբերի հետ:</p> <p>Բլոկավորումների կամ խախտումների մասին օգտատերերին իրազեկում՝ Pop-up փիլի ծանուցումների միջոցով:</p> <p>3.1. Active Directory համակարգում առկա օգտատերերի/խմբերի հիման վրա բացառությունների կարգաբերում:</p> <p>3.2. Քաղաքականություններով սահմանված սահմանափակումների ժամանակավոր թույլատրման հնարավորություն՝ ըստ օգտատերերի պահանջի (հարցում/պատասխան ռեժիմով, օգտատերը օպերատորին տրամադրում է համապատասխան կողմ, իսկ օպերատորը տրամադրում է պատասխան կողմ, որը ժամանակավորապես վերացնում է սահմանափակումները):</p> <p>4. Տվյալների փոխանակման հանգույցի (Data exchange chassis) պահանջներ</p> <p>Հանգույցը պետք է ապահովի՝</p> <p>4.1. Բաց ենթակառուցվածք, այլ արտադրողների կողմից մշակված ծրագրային ապահովման ինտեգրման համար:</p> <p>4.2. Ինտեգրվող համակարգի հետ տվյալների փոխանակման 1-ից ավելի եղանակ՝ ներկառուցման ընթացքում ճկունություն ապահովելու նպատակով:</p> <p>4.3. Security Innovation Alliance (SIA) դաշինքի մեջ մտնող այլ արտադրողների համակարգերի հետ ինտեգրվելու հնարավորություն:</p> <p>4.4. Տվյալների փոխանակման հաղորդագրությունների տրամադրման հնարավորություն՝ հարցում/պատասխան, նախապես կարգաբերված փիլիպեր՝ one-to-many, one-to-one:</p> <p>4.5. API ինտեգրման ապահովում՝ համակարգի կողմից սպասարկվող պրոտոկոլների հիման վրա:</p> <p>5. Կենտրոնացված կառավարման հանգույցի պահանջներ</p> <p>Հանգույցը պետք է ապահովի՝</p> <p>5.1. Կենտրոնացված կառավարում և հաշվեփոխությունների տրամադրում հեղազուր ենթակառուցվածքերի համար՝</p> <p>5.1.1. աշխարհայանների հակավիրուսային պաշտպանության ենթակառուցվածք,</p> <p>5.1.2. տվյալների փոխանակման սարքավորումների կառավարման ենթակառուցվածք:</p> <p>5.2. Հակավիրուսային համակարգի կենտրոնացված փնդադրում և հասանելի բոլոր մոդուլների թարմացում՝ առանց հավելյալ ծրագրային ապահովման (SCOM, GPO և այլ) օգտագործման:</p>
--	--	--	--

			<p>5.3 Հակավիրուսային պաշտպանության ենթակառուցվածքում առկա բոլոր հանգույցների վերահսկում իրական ժամանակում՝</p> <p>5.3.1. առկա կարգավիճակի ստուգում,</p> <p>5.3.2. համագործակցության փոխընկերակց՝ Client-Server:</p> <p>5.4. Կառավարող սերվերի հնարավորությունների միջոցով բեռնվող թարմացումների նախնական ստուգում/փորձարկում:</p> <p>5.5. Թարմացումների առաքում աշխատակայաններ ներբեռնելուց անմիջապես հետո:</p> <p>5.6. Աշխատակայաններում առկա բոլոր իրականացվող ֆայլերի և գրադարանների վերահսկում և ցուցակավորում:</p> <p>5.7. Ֆայլերի Hash-ի համեմատության վրա հիմնված ֆայլերի բլոկավորման/հզոլացման/հեռացման գործառնությունների իրականացում ենթակառուցվածքում առկա բոլոր հանգույցներում:</p> <p>5.8. Կառավարման վահանակի փոխընկերակց՝ Web console, որը պետք է ամբողջական հասանելի լինի հեղուկա դիտարկիչների միջոցով՝ Internet Explorer, Mozilla Firefox և Google Chrome.</p> <p>5.9. Կառավարող ադմինիստրատորի կրկնակի նույնականացում:</p> <p>5.10. Cloud (առցանց) կառավարման վահանակի հասանելիություն՝ արտադրողի կողմից փորձարկվող, արտադրողի ցանցային փիրույթում:</p> <p>5.11. Անվտանգության պահանջներին համապատասխանելու վերաբերյալ հաշվետվությունների գեներացման ժամանակացույց կազմելու հնարավորություն՝ համաձայն յուրաքանչյուր հարցման:</p> <p>6. Լիցենզավորման, հակավիրուսային բազաների թարմացման պահանջներ</p> <p>6.1. Արբոնագրերի քանակը՝ 501:</p> <p>6.2. Վերոնշյալ բոլոր գործառնությունները պետք է ամբողջովին հասանելի լինեն լիցենզավորման ժամանակահատվածի ավարտից հետո:</p> <p>6.3. Թարմացվող հակավիրուսային տվյալների բազաները պետք է ունենան հեղուկա ֆունկցիոնալ հնարավորությունները՝</p> <p>6.3.1. Հակավիրուսային բազաների կանոնավոր թարմացում՝ առնվազն օրացուցային օրը մեկ անգամ,</p> <p>6.3.2. Թարմացնամ մի շարք եղանակներ, այդ թվում՝ կապուղիներով և էլեկտրոնային կրիչների միջոցով:</p> <p>7. Սպասարկման պահանջներ</p> <p>Մատակարարը պետք է ապահովի՝</p> <p>7.1. Ակտուալ վարկանիշային տվյալների պահուցների և բոլոր անհրաժեշտ թարմացումների ստացում արտադրողից,</p> <p>7.2. Արտադրողի կայքի կամ արտադրողի կողմից փորձարկվող արտաքին կրիչների միջոցով հիմնական և միջանկյալ ծրագրային ապահովման թարմացումների ստացում, ծրագրային կոդերի թարմացում,</p> <p>7.3. Համակարգի փեղադրման, կարգաբերման և շահագործման հետ կապված արտադրողի կողմից խորհրդարկության փորձադրում հեռախոսով, էլ. փոստով և արտադրողի կայքի միջոցով՝ երկուշաբթիից կիրակի, ժամը՝ 00:00-24:00-ն,</p> <p>7.4. Արտադրողի կայք էջի մշտական (24x7) հասանելիություն՝ արտադրողի կողմից ուղեկցման ակտիվ ժամանակահատվածի ընթացքում,</p> <p>7.5. Սերվիս ֆիլիալցված, հայալեզու մասնագետի առկայություն պարավիրաբույժ փորձաքննում (համակարգի ներդրման և ինտեգրման փուլում) սպասարկելու համար,</p> <p>7.6 Համակարգի ներդրում առկա վիրտուալ միջավայրում, ինտեգրում գործող Microsoft Domain ենթակառուցվածքի հետ:</p> <p>7.6.1. Մեկ ամսվա ընթացքում բոլոր թվով 501 աշխատակայանների առկա հակավիրուսային համակարգի փախարհում նորով երևանի քաղաքապետարանի, վարչական շրջանների և Քաղաքապետարանի պարկանող այլ գերատեսչական շենքերում:</p> <p>7.6.2. Աշխատանքները պետք է իրականացվեն փեղում: Ըստ առաջացած խնդիրների պետք է իրականացվի համապատասխան գործողություններ խնդիրները վերացնելու համար որոնք են՝</p> <p>ա. օպերացիոն համակարգի թարմացում համապետելիությունը ապահովվելու համար,</p> <p>բ. խոչընդոտող ծրագրերի իդենտիֆիկացում և հեռացում առանց ինֆորմացիայի կորուստի,</p> <p>գ. համակարգի ֆորմատավորում, ապահովվելով տվյալների պահպանումը, նախկինում առկա բոլոր բոլոր ծրագրերի վերափեղում:</p> <p>Գլուխ 2</p> <p>1. Էլ. Փոստի պաշտպանման համակարգ (Secure Email Gateway)</p> <p>Տեխնիկական բնութագիր (անվանում, պահանջներ, ճարտարապետություն (կառուցվածք) և ձև)՝</p> <p>1.1. Հիպերվիզորներ, որոնք համապետելի են VMware ESXi 5.0/5.1/5.5/6.0/6.5/6.7 փորձարկների հետ</p>
--	--	--	---

			<p>1.2. Համակարգային առանձնահատկություններ</p> <p>1.2.1. Վիրտուալ պրոցեսորի միջուկների քանակ՝ նվազագույնը 1,</p> <p>1.2.2. Օպերացիոն հիշողություն՝ նվազագույնը 2ԳԲ,</p> <p>1.2.3. Ֆիզիկական հիշողություն՝ 250ԳԲ,</p> <p>1.2.4. Վիրտուալ ցանցային ինտերֆեյսների քանակ՝ նվազագույնը 4:</p> <p>1.3. Արդյունավետություն՝</p> <p>1.3.1. Ընդհանուր թողունակություն(հաղորդագրություններ/ժամում)՝ ոչ պակաս, քան 34 000,</p> <p>1.3.2. AntiSpam համակարգի թողունակություն(հաղորդագրություններ/ժամում)՝ ոչ պակաս, քան 30 000,</p> <p>1.3.3. AntiSpam+AV համակարգի թողունակություն (հաղորդագրություններ/ժամում)՝ ոչ պակաս, քան 26 000,</p> <p>1.3.4. Փոստային դոմենների քանակը՝ առնվազն 20,</p> <p>1.3.5. MailServer ռեժիմում փոստարկղերի քանակը՝ առնվազն 150,</p> <p>1.3.6. Gateway ռեժիմում օգտատերերի/հաշիվների քանակը՝ առնվազն 1500,</p> <p>1.3.7. Պաշտպանության քաղաքականությունների քանակ (մեկ դոմենի համար/ընդամենը)՝ 60/300,</p> <p>1.3.8. Պաշտպանական պրոֆիլների քանակը (մեկ դոմենի համար/ընդամենը)՝ 50/60:</p> <p>1.4. Ցանցային ծառայություններ և այլ տեխնոլոգիաներ՝</p> <p>1.4.1. Տեղադրման ռեժիմներ՝ Transparent Router, GatewayMail Server,</p> <p>1.4.2. Մուտքային և ելքային հոսքերի վերահսկում,</p> <p>1.4.3. IPv4 և IPv6 համարեղելիություն,</p> <p>1.4.4. Փոստային հաղորդագրությունների ստուգման ճկուն քաղաքականություններ (պաշտպանված/չպաշտպանված դոմենների համար՝ հիմնված առանձին IP-ի հասցեների և ուղարկողի/ստացողի տվյալների վրա),</p> <p>1.4.5. Էլ. փոստի պրոտոկոլների վերահսկման և սահմանափակման ճկուն պրոֆիլների սպեղծելու հնարավորություն, RFC ստանդարտի համապատասխանության ստուգում, փաթեթների վերնագրերը (Header) փոխելու հնարավորություն:</p> <p>1.4.6. LDAP, RADIUS, POP3 և IMAP-ի միջոցով SMTP նույնականացման ապահովում,</p> <p>1.4.7. LDAP-ի հիման վրա փոստի ուղղորդում: LDAP տարբերակիչների կիրառմամբ փոստային հաղորդագրությունների ստուգում՝ քաղաքականությունների (համապատասխան դոմենների) հիման վրա,</p> <p>1.4.8. Աշխարհագրական դիրքի մասին տվյալների հիման վրա էլ. փոստի ստուգման քաղաքականության կիրառում,</p> <p>1.4.9. Փոստային հաղորդագրությունների հերթերի կառավարում,</p> <p>1.4.10. Էլ. փոստի արխիվացում՝ առանձնացված պահպանման հնարավորությամբ,</p> <p>1.4.11. Webmail ինտերֆեյսի առկայություն, եթե համակարգն աշխատում է MailServer ռեժիմում,</p> <p>1.4.12. Օգտատերերի տվյալների լոկալ բազայի առկայություն, եթե համակարգն աշխատում է MailServer ռեժիմում,</p> <p>1.4.13. Վնասակար կոնտենտի առկայության մասին ահազանգման հաղորդագրությունների կարգաբերման հնարավորություն,</p> <p>1.4.14 Մի քանի սերվերների միջև փոստային տրաֆիկի բալանսավորման մեխանիզմների ապահովում,</p> <p>1.4.15. Ճկուն պահուստավորման (Backup) հնարավորություն. MailServer ռեժիմում համակարգի և օգտատերերի կարգաբերումների, էլ. փոստի ավտոմատ կրկնօրինակում:</p> <p>1.5. Սպանալիքներից պաշտպանվելու մեխանիզմներ՝</p> <p>1.5.1 Antispam,</p> <p>1.5.2. Ուղարկողների համաշխարհային վարկանիշային բազա,</p> <p>1.5.3. Էլ. հաղորդագրությունների check sum – երի ստուգում,</p> <p>1.5.4. Էլրիստիկ վերլուծության դինամիկ կանոնների ստացում,</p> <p>1.5.5. Նախնական պաշտպանություն spam հաղորդագրությունների հանկարծակի աճից (spam outbreak),</p> <p>1.5.6. Լոկալ հասցեների և օգտատերերի վարկանիշային ցուցակներ,</p> <p>1.5.7. Spam-ի հայտնաբերման նպատակով էլ. փոստի վարքագծային վերլուծություն,</p> <p>1.5.8. Էլ. հաղորդագրությունների վերնագրերի (Header) խորը ստուգում,</p> <p>1.5.9. Համակարգի գործողությունների ճկուն պրոֆիլավորում՝ անվտանգության փարբեր միջոցառումների դեպքում,</p> <p>1.5.10. Այլ արտադրողների «սև» URL (SURBL/RBL) ցուցակների օգտագործման հնարավորություն,</p> <p>1.5.11. IP հասցեների «սև» ցուցակների և այլ արտադրողների սարքավորումների DNS գրառումների (DNSBL) օգտագործման հնարավորություն,</p> <p>1.5.12. PDF ֆայլերի սկանավորում և “նկար” փիլի ֆայլերի վերլուծություն,</p> <p>1.5.13. «Սև»/«սպիտակ» ցուցակներ՝ գլոբալ, դոմենի և օգտատիրոջ մակարդակներում,</p>
--	--	--	--

			<p>1.5.14. Վիճակագրական ֆիլտրում՝ ըստ Բայեսի (Bayes filtration),</p> <p>1.5.15. Ուղարկողների նույնականացման չափորոշիչների աջակցում (SPF, DKIM, DMARC),</p> <p>1.6. Antivirus,</p> <p>1.7. Հաղորդագրությունների և դրանց կցված ֆայլերի սիգնատուրային և էվրիստիկ հեղափոխություններ,</p> <p>1.8. Նախնական պաշտպանություն վնասակար ծրագրային ապահովման փրարածումից (virus outbreak),</p> <p>1.9. Grayware-իլրացուցիչ հայտնաբերում,</p> <p>1.10. Տարբեր տեսակի վնասակար ծրագրային ապահովման հայտնաբերման համար ինքնուրույն պրոֆիլներ ստեղծելու հնարավորություն:</p> <p>1.11. DLP և կոնտենտի ֆիլտրում,</p> <p>1.11.1. Գաղտնի ֆայլերի «մաքնահետքերի» (fingerprint) ստեղծում՝ դրանց ուղարկումը կանխելու նպատակով,</p> <p>1.11.2. Գաղտնի տեղեկատվության ավտոմատ հայտնաբերում և արգելափակում,</p> <p>1.11.3. HIPAA, SOX, GLBA կամ ինքնուրույն ստեղծված բառարանների հիման վրա կոնտենտի ֆիլտրում արտաքին և ներքին հոսքերի համար,</p> <p>1.12. Կոնտենտի ֆիլտրում՝ ըստ կցված ֆայլերի տեսակի և դրանց ընդլայնումների (extention) ստուգում,</p> <p>1.13. Գաղտնագրված արխիվների/PDF/Office ֆայլերի ավտոմատ ստուգում՝ նախապես բեռնված գաղտնաբառերի կիրառմամբ,</p> <p>1.13.1. Ֆայլերից (PDF, Microsoft Office) վնասակար կոդերը կամ հղումները հեռացնելու հնարավորություն՝ առանց օրիգինալ ֆայլը փոփոխելու:</p> <p>1.14. Պաշտպանության լրացուցիչ տեխնոլոգիաներ,</p> <p>1.14.1 Փոստային հաղորդագրությունների մեկուսացում (Quarantine)՝ դրանցում վնասակար կամ արգելված բովանդակության առկայության դեպքում, և հաղորդագրության ուղարկողներին և համակարգի ադմինիստրատորներին դրա գործունեության մասին տեղեկացնելու հնարավորություն:</p> <p>1.14.2. Գաղտնագրում՝</p> <p>ա. Server-to-server գաղտնագրում/բանալիների փոխանակման ընդարձակ ալգորիթմների ցանկի սպասարկում, բ. S-MIME սպասարկում,</p> <p>գ. HTTPS, SMTPS, SSH, IMAPS և POP3S պրոտոկոլների սպասարկում,</p> <p>դ. IBE գաղտնագրման սպասարկում:</p> <p>1.15. Կառավարում, իրադարձությունների գրանցում և հաշվետվությունների ստեղծում՝</p> <p>1.15.1. Ադմինիստրատորի հաշիվներ դոմենների համար՝ հիմնված դերերի վրա,</p> <p>1.15.2. TCP միացումների, փոստային հաղորդագրությունների և իրական ժամանակում անվտանգության իրադարձությունների մոնիթորինգ,</p> <p>1.15.3. Համակարգային փոփոխությունների, անվտանգություն միջադեպերի գրանցում,</p> <p>1.15.4. Հաշվետվությունների ստեղծման ներկառուցված մոդուլ,</p> <p>1.16. Գրանցված իրադարձությունների և հաշվետվությունների փոխանակման ապահովում՝ հավելյալ կենտրոնացված իրադարձությունների մշակման համակարգերի օգտագործման դեպքում,</p> <p>1.16.1. SNMP-ի աջակցում՝ ստանդարտ և հարուկ MIB-ների կիրառմամբ,</p> <p>1.16.2. Syslog պրոտոկոլի ապահովում,</p> <p>1.16.3. Էլ. փոստով ծանուցումներ իրադարձությունների մասին՝ ըստ կարգադրիաների:</p> <p>1.17. Համակարգի անընդհատություն՝</p> <p>1.17.1. Active/Passive ռեժիմի ապահովում,</p> <p>1.17.2. Active/Active ռեժիմում կարգաբերումների սինխրոնիզացում,</p> <p>1.17.3. Հանգույցների միջև կարանտինի և փոստային հերթերի սինխրոնիզացում,</p> <p>1.17.4. Համակարգի անսարքության հայտնաբերում և ահազանգում,</p> <p>1.17.5. Ինտերֆեյսների և ծառայությունների աշխատունակության մոնիթորինգ, ինչպես նաև վերջիններիս խափանման դեպքում տրաֆիկը մեկ այլ հանգույց ավտոմատ կերպով ուղղորդելու հնարավորություն:</p> <p>1.18. Երաշխիք և սպասարկում</p> <p>Սպասարկարը պետք է ապահովի՝</p> <p>1.18.1. Արտադրողի կողմից երաշխիք և սպասարկում՝ առնվազն 1 փարի ժամկետով (սպասարկումը պետք է հասանելի լինի 24x7x365 ռեժիմով):</p> <p>1.19. Սպասարկման պահանջներ</p> <p>1.19.1. Ընթացիկ վարկանիշային բազաների և բոլոր անհրաժեշտ թարմացումների ստացում արտադրողից,</p> <p>1.19.2. Արտադրողի կայքի կամ ֆիզիկական կրիչների միջոցով արտադրողի կողմից թողարկվող հիմնական և միջանկյալ ծրագրային ապահովման ստացումը, ծրագրային կոդերի թարմացումը,</p> <p>1.19.3. Համակարգի տեղադրման, կարգաբերման և շահագործման վերաբերյալ արտադրողի կողմից խորհրդատվությունների տրամադրում հեռախոսով, էլ. փոստով և արտադրողի աջակցության կենտրոնի</p>
--	--	--	--

			<p>միջոցով՝ երկուշաբթիից կիրակի, ժամը՝ 00:00-24:00-ն, 1.19.4. Մշտական (24x7) մուտք արտադրողի կայքէջ՝ արտադրողի կողմից ուղեկցման ակտիվ ժամանակահատվածի ընթացքում, 1.19.5. Սերփիֆիկացված, հայալեզու մասնագետի առակություն պատվիրատուի տարածքում համակարգի փողոցային փուլում սպասարկում իրականացնելու համար, 1.19.6. Համակարգի փողոցային և շահագործում պատվիրատուի ենթակառուցվածքում՝ մատակարարումից հետո մեկ ամսվա ընթացքում, ա. Վիրտուալ միջավայրի ստեղծում, համակարգի փողոցային, կարգաբերում, ինտեգրում էլեկտրոնային փոստի ենթակառուցվածքի հետ: բ. Տեղադրման ընթացքում ծագած խնդիրների լուծում՝ ըստ անհարաժեշտության կամ պահանջի, գ. Համակարգի բոլոր բազադրիչների անընդհատության ապահովման սցենարների մշակում, կարգաբերում և փորձարկում, դ. Բոլոր աշխատանքները պետք է իրականացվեն անմիջապես պատվիրատուի տարածքից:</p>
--	--	--	---

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Երևանի քաղաքապետարան
Հասցե՝ Արգիշտիի փող. 1
Գանձապետարան
900012410016
ՀՎՀՀ 02593108
Է. Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կիբեթսեկ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Չարենցի 17
«ԱՄԵՐԻԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
1570021262310100
ՀՎՀՀ 00134545
Կ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Չափման միավորը	Միավոր գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Մատակարարման	
					Հասցեն	Ժամկետը**
1	դրամ	16980000	16980000	1	Արգիշտիի 1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
Երևանի քաղաքապետարան
Հասցե՝ Արգիշտիի փող. 1
Գանձապետարան
900012410016
ՀՎՀՀ 02593108
Է. Կիրակոսյան

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Կիբեթսեկ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Չարենցի 17
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
1570021262310100
ՀՎՀՀ 00134545
Կ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48761100/2	կիրեն անվտանգության համակարգի ձեռքբերում	0	0	0	0	0	0	0	16980000	16980000	16980000	16980000	16980000	16980000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Երևանի քաղաքապետարան
Հասցե՝ Արգիշտիի փող. 1
Գանձապետարան
900012410016
ՀՎՀՀ 02593108
Է. Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կիրենսեկ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Չարենցի 17
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
1570021262310100
ՀՎՀՀ 00134545
Կ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «
» « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի

Կատարողի անունը

Պատվիրատուի

անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20__ թ. _____-ին կնքված N _____

պայմանագրի կնքման ամսաթիվը

պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__ թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն